



Ընդունվել է Նախախորհրդարանի
2014 թ. մայիսի 3-ի որոշմամբ

ՆՈՐ ՈՐԱԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

(«ՆՈՐ ՈՐԱԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ» ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԱՐԲԵՐԱԿ)

1.1. Առկա իրավիճակը. մարտահրավերներ և հնարավորություններ

1.1.1. Ներկայիս քաղաքակրթությունը հայտնվել է մարդու, ազգերի, պետությունների և համայն մարդկության կենսագործունեության բոլոր ոլորտներն ընդգրկող համակարգային ճգնաժամի մեջ:

1.1.2. Այդ ճգնաժամի հարուցած փոփոխությունների արմատական, բուռն, արագընթաց և անկանոն զարգացումների միտումները ցույց են տալիս, որ մարդկությունն անցում է կատարում դեպի նոր ծնվող մեկ այլ քաղաքակրթություն:

1.1.3. Նման մասշտաբի ու խորության համակարգային ճգնաժամերին բնորոշ արմատական փոփոխությունների հորձանուտում հայտնված առանձին ազգերի և համայն մարդկության հեռանկարը կարող է լինել ինչպես մռայլ ու աղետալի, այնպես էլ լուսավոր ու արգասաբեր:

1.1.4. Ճգնաժամը պայմանավորող հիմնական գործոններն են.

– աշխարհընկալման հոգևոր բաղադրիչն անտեսելու և գլխավորապես ու հիմնականում դրա նյութական բաղադրիչի վրա հենվելու հանգամանքը,

– մի կողմից համընդհանուր շուկայականացման նոր ազատական գաղափարախոսության ու քաղաքականության, մյուս կողմից՝ ավելի ու ավելի արագացող տեխնոլոգիական առաջընթացի վրա հիմնվող համաշխարհայինացումը,

– մարդու, ազգերի և պետությունների նոր որակի՝ բազմաշերտ ու բազմաբնույթ գաղութայնացումը, որն ընդգրկում է անգամ անհատական ու կոլեկտիվ գիտակցության ոլորտները:

1.1.5. Հայության և Հայաստանի պարագայում համակարգային ճգնաժամն աշխարհի համար ընդհանուր հատկանշականից բացի, պայմանավորված է նաև դրա բացասական ազդեցությունը խորացնող հետևյալ հիմնական գործոններով.

– հայության կյանքում դարեր շարունակ իրար հաջորդած անբարենպաստ հանգամանքների, առաջին հերթին՝ պետականության բացակայության, Ցեղասպանության ու հայրենազրկման, ազգի մեծ մասի՝ օտար երկրներում բնակության հանգամանքների հետևանքով ձևավորված ու զգալի չափով արմատավորված բացասական գործոնների համալիր համախումբը,

որը խոչընդոտում է նաև իրավիճակի համարժեք գնահատմանն ու նորի/փոփոխությունների նկատմամբ ընկալունակությամբ,

– ժամանակակից քաղաքական չափանիշներով հայության՝ որպես ազգային կազմակերպվածքի, կայացած չլինելու, դրա հետևանքով նրա՝ ոչ միայն քաղաքական, սոցիալ-մշակութային և մի շարք այլ առումներով մոբիլիզացված չլինելու, այլև ըստ էության պառակտված լինելու և/կամ մի զգալի մասով իր ընդհանրական ճակատագրի նկատմամբ անտարբեր լինելու հանգամանքը,

– Հայաստանում հաստատված առավել կեղեքիչ տարբերակի արդի նորգաղութային տիրապետությունը, որի հետևանքով պետական կառավարման համակարգը վերածվել է ազգային շահերի հաշվին օտար ուժերի և ապազգային վերնախավի շահերի սպասարկման, այդ նպատակով երկրի ու նրա ժողովրդի գիշատչական շահագործման, ժողովրդի իշխանության յուրացման ու նրա կամքի բռնադատման, Հայաստանի քաղաքացիների ազգային և մարդկային արժանապատվության, իրավունքների ու ազատությունների ոտնահարման գործիքի, իսկ կառավարող վերնախավի ու ժողովրդի միջև առաջացել է անհաղթահարելի անջրպետ ու վերնախավը գրեթե իսպառ կորցրել է սոցիալական հենարանն ու վստահությունը,

– պետական կառավարման համակարգի ինքնափլուզման և պետական ինքնիշխանության կորստի ընթացքը, կյանքի որակի սրընթաց անկումը, աճողական մեծ տեմպ ու զանգվածային բնույթ ունեցող արտագաղթը, Հայրենիքի առանցքը կորցնող արտերկրաբնակ հայության ահագնացող ուժացումը,

– հայության ինքնության և նրա ու Հայաստանի կենսունակության պարամետրների՝ նվազագույնի սահմանին մոտենալու հանգամանքը, ինչի հետևանքով տարածաշրջանային բացասական առանձնահատկությունների պայմաններում առաջանում է պետականության կորստի և հայրենաբնակ հայության ֆիզիկական գոյության ռեալ վտանգ, որի իրականություն դառնալու պարագայում արտերկրաբնակ հայությունը կենթարկվի վերջնական ուժացման:

1.1.6. Աշխարհում հաստատված համակարգային ճգնաժամի ելքն ու հեռանկարը շատ առումներով կախված են լինելու ազգերի և յուրաքանչյուր մարդու որդեգրած վարքից, հատկապես՝ մարդու սոցիալական ու կենսաբանական դերերի և դրանց միջև հարաբերակցության, մարդու և մարդկայինի ու դրանց վերարտադրության բնական ու բանական ձևերին և սահմաններին վերաբերող ոլորտներում:

1.1.7. Պատմական փորձով բազմիցս ապացուցված է, որ գիտակցված մոբիլիզացիայի պարագայում ճգնաժամի մեջ ավելի վաղ հայտնված և դրա ազդեցությունների ավելի մեծ ու ծանր չափաբաժին կրած ազգերը, որպես կանոն, ավելի պատրաստ են լինում գալիք լայնամասշտաբ և արմատական քաղաքակրթական փոփոխություններին:

1.1.8. Այդ պատճառով շատ այլ երկրների ու ազգերի համեմատությամբ Հայաստանի և հայության ավելի վատթար վիճակը որքանով աղետալի, նույնքանով էլ հուսադրող է, քանի որ այն թե՛ քանակական և թե՛ որակական առումներով պարունակում է զարգացման ավելի մեծ հնարավորություն:

1.1.9. Ուստի հայությունը՝ որպես համակարգային ճգնաժամի կոփվածք ունեցող ազգ, ավելի մեծ հնարավորություն ունի ոչ միայն խուսափելու գահավիժումից, այլև ապահովելու թռիչքային զարգացում:

1.1.10. Ըստ այդմ՝ ներկայիս համաշխարհային ու համազգային-պետական ճգնաժամը և արմատական քաղաքակրթական փոփոխությունները անհրաժեշտ է դիտել որպես ազգի թռիչքային զարգացման ռեսուրս ու հնարավորություն՝ դրանք վերածելով հայության շահերի իրացման հիմքերի ու նախադրյալների:

1.2. Նոր որակի հայկական պետությունը

1.2.1. Ճգնաժամը հաղթահարելու և թռիչքային զարգացում ապահովելու նպատակով անհրաժեշտ է համախմբել և գործադրել համայն հայության ներուժը, ինչի համար որպես գործիք կարող է ծառայել միայն ինչպես ձևի, այնպես էլ բովանդակության առումներով միանգամայն նոր որակ հայկական պետությունը, որը պետք է փոխարինի պետական կառավարման ներկայիս գաղութային համակարգին:

1.2.2. Նոր որակի հայկական պետությունը պետք է ձևավորվի իր ռազմավարական շահերի իրացման և դրանք արտահայտող նպատակների իրագործման համար ազգային մշակույթի հիմքի վրա՝ ձևավորում է նոր որակի հայկական պետություն, ինչպես նաև

1.2.3. Նոր որակի հայկական պետությունը.

– ձևավորվում և զարգանում է ազգային մշակույթի հենքի վրա՝ միջազգային առաջադեմ փորձի ներմուծման և ազգային-քաղաքական ստեղծագործականության համադրմամբ՝ որպես արժեհամակարգային ուղենիշ ընդունելով հավատի, սիրո, ճշմարտության, արժանապատվության, ազատության և արդարության համամարդկային առաքինությունները,

– հայությանը համախմբում է իր առանցքի շուրջ միասնական ցանցային կազմակերպվածքի մեջ՝ այն ձևավորելով որպես իր առանցքի շուրջ կազմավորվող «Հայոց աշխարհ» հայաստանակենտրոն համահայկական ցանցային համակարգ (այսուհետև՝ «Հայոց աշխարհ» համակարգ կամ համահայկական ցանցապետություն),

– հիմնվում է հոգևորի ու նյութականի, բնականի ու բանականի, կենսաբանականի ու սոցիալականի, օրգանականի ու տեխնիկականի, ավանդականի ու արդիականի, անհատականի ու հանրայինի, ազգայինի ու համամարդկայինի ներդաշնակ միասնության վրա,

– հարգում է համամարդկային առաքինություններից բխող և նշված ներդաշնակ միասնությանն ու դրանց փոխադարձ զարգացմանը միտված մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները և ապահովում է դրանց գերակայությունն ու արդյունավետ պաշտպանությունը,

– երաշխավորում է հայության և հայ մարդու, Հայաստանի բոլոր քաղաքացիների ու բնակիչների, ընտանիքի, համայնքների և էթնիկական խմբերի ազատ, ներդաշնակ ու արժանապատիվ գոյությունը և ստեղծագործ զարգացումը,

– ապահովում է մարդ-մարդ, մարդ-հասարակություն, մարդ-բնություն, մարդ-պետություն, հասարակություն-բնություն, հասարակություն-պետություն հարաբերությունների ասպարեզում նոր՝ ավելի ներդաշնակ, համերաշխ և համագործակցային, որակի կենսակերպի, այդ թվում՝ հանրային համակեցության և քաղաքական ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգերի ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև հոգևոր ու ֆիզիկական առումներով ներդաշնակորեն զարգացած, մարդասեր, բնասեր ու հայրենասեր մարդու և քաղաքացու դաստիարակումը,

– օժտված է լիարժեք ինքնիշխանությամբ,

– հզոր է և մրցունակ,

– ունի հայության շահերն արտահայտող ու նրա անօտարելի իրավունքների վերատիրացմանը միտված նպատակներ առաջադրելու և իրագործելու ու այդ նպատակներից բխող խնդիրներ լուծելու ունակ պետական կառավարման համակարգ, որն ապահովում է մասնակցայնություն, հետադարձ կապ ու հաշվետվայնություն, ինչպես նաև ռազմավարական հարցերի լուծում՝ բացառապես ժողովրդի կամքի արտահայտման միջոցով,

– գեներացնում է ազգային և համամարդկային ներդաշնակ զարգացմանը, տարածաշրջանային և համաշխարհային համագործակցությանը նպաստող նոր գաղափարներ ու ծրագրեր և նախաձեռնում է դրանց իրագործումը և/կամ մասնակցում է արդեն գոյություն ունեցող նմանաբնույթ գործընթացներին,

– համայն հայության Հայրենիքն է և ի շահ հայության ու յուրաքանչյուր հայ մարդու՝ իր առանցքի շուրջը ձևավորվող «Հայոց աշխարհ» ցանցային համակարգում առավելագույնս ներգրավում և դրա միջոցով արդյունավետ կերպով գործադրում է հայության ռեսուրսներն ու հնարավորությունները:

1.3. Նոր որակի հայկական պետության ձևավորման, գործունեության և զարգացման հիմնական գերակայությունները և նախադրյալները, գլխավոր ու ուղորտային նպատակները և սկզբունքները

1.3.1. **Հիմնական գերակայություններն են.**

1.3.2. թամբել, իսկ հնարավոր մասով՝ նաև ուղղորդել համաշխարհային համակարգային ճգնաժամի առաջացրած արմատական փոփոխությունների ալիքը և այն առավելագույնս

օգտագործել որպես նոր որակի հայկական պետության ու «Հայոց աշխարհ» ցանցային համակարգի ձևավորման ու թռիչքային զարգացման նախադրյալ և ռեսուրս,

1.3.2.1. ապահովել նոր որակի հայկական պետության և հայության կազմակերպվածության ու կենսակերպի կայացածության գործնականորեն անշրջելի վիճակ:

1.3.3. Հիմնական նախադրյալներն են.

1.3.3.1. Հայության ազգային համախմբումն ու քաղաքական ինքնակազմակերպումը:

1.3.3.2. Ազատ ու ստեղծագործ հայ մարդու ու Հայաստանի քաղաքացու և ազատ ու ստեղծագործ հայության գոյության ու գործունեության ապահովումը:

1.3.4. Գլխավոր նպատակն է.

հայության և նրա պետության՝ որպես համաշխարհային գործոնի, կայացման և կայուն զարգացման ապահովումը:

1.3.5. Կենսագործունեության առանձին ոլորտներում գլխավոր նպատակներն են.

1.3.5.1. Սոցիալ-մշակութային ոլորտում՝ ազգային ինքնության և մարդկային ստեղծագործական վերարտադրողականության կարողության բացահայտման և դրա շարունակական հզորացման ապահովումը:

1.3.5.2. Սոցիալ-տնտեսական ոլորտում՝ պետության էական և կարգավորիչ դերի միջոցով հայ մարդու, Հայաստանի քաղաքացու, ընտանիքի, համայնքի, պետության և ազգի օպտիմալ կենսագործունեության և վերընթաց զարգացման, ազգի և պետության ռազմավարական շահերի սոցիալական ու նյութատեխնիկական ապահովումը, ինչպես նաև քաղաքացիների և խմբերի ստեղծագործ արտադրության և նորարարական ստեղծագործականության պայմանների ապահովումը:

1.3.5.3. Գիտության, տեխնոլոգիաների և կրթության ոլորտում՝ գիտության, տեխնոլոգիաների և կրթության վերածումը ազգի և պետության շահերի իրացումն ապահովող գլխավոր գործիքի ու գործոնի, ինչպես նաև կրթության հիմնական՝ մարդու և մարդկային սերունդների կերտման ու զարգացման դերի վերականգնման և արդի պայմաններում մարդկային ու ազգային ինքնության պաշտպանության համար դրա կիրառության ապահովումը:

1.3.5.4. Տեղեկութային ոլորտում՝ Հայաստանի և ապագայում ստեղծվելիք համահայկական ցանցապետության՝ որպես տեղեկութային-տեխնոլոգիական ոլորտի լիիրավ սուբյեկտի ու ինքնուրույն դերակատարի ձևավորման ու կայուն զարգացման ապահովումը:

1.3.5.5. Բնապահպանական ոլորտում՝ տնտեսական շահի նկատմամբ բնապահպանական շահի գերակայության սկզբունքի հիման վրա բնության վերականգնման և դեպի բնություն մարդու առաջընթացի ապահովումը, մարդ-հասարակություն-բնություն ներդաշնակեցման ապահովումը:

1.3.5.6. Պաշտպանական ոլորտում՝ Հայաստանի պաշտպանական անվտանգության լիարժեք կերպով երաշխավորման և պաշտպանական բաղադրիչի մասով Հայաստանի ու

հայության հեռանկարային ռազմավարական շահերն արտահայտող նպատակների իրագործման և դրանցից բխող խնդիրների լուծման ապահովումը:

1.3.5.7. Իրավական և դատաիրավապահպան ոլորտում՝ արդիական կերպերի մեջ ազգային բնույթի իրավական և դատաիրավապահպան համակարգերի ձևավորման և գործառման ապահովումը:

1.3.5.8. Համազգային ոլորտում՝ կորցրած Հայրենիքի և հայության իրավունքների վերականգնման, հայապահպանության, դեպի Հայրենիք մեծ հայրենադարձության իրականացման, ծնելիության շեշտակի աճման, արդի ցանցային և տեխնոլոգիական հնարավորությունների միջոցով հայության համախմբման և Հայաստան-Մփյուռք միասնական կյանքով ապրելու ու գործելու պայմանների ստեղծման ապահովումը:

1.3.5.9. Արտաքին հարաբերությունների ոլորտում՝ ազգային և պետական շահերի պաշտպանության և հետապնդման Հայաստանի՝ միջազգային հարաբերությունների օբյեկտից ստեղծագործ սուբյեկտի վերածման, ինչպես նաև նրա ու նրա միջոցով հայության՝ որպես միջազգային հարաբերությունների ավանդական (պետություններ և դրանց միավորումներ ու դաշինքներ) և ոչ ավանդական (անդրազգային ու ազգային ցանցային միավորներ) դերակատարների միջև կամրջող խաչմերուկի դերի նորովի վերաստանձնման, հայության և նրա պետության՝ նախ տարածաշրջանային, այնուհետև՝ համաշխարհային գործոնի վերածման, ապահովումը:

1.3.5.10. Պետական կառավարման ոլորտում՝ ազգային նպատակներ առաջադրելու և իրագործելու, ինչպես նաև այդ նպատակներից բխող խնդիրներ լուծելու ունակ պետական կառավարման համակարգի ձևավորման ու գործառման ապահովումը:

1.3.6. **Հիմնական սկզբունքներն են.**

1.3.6.1. **Հայակենտրոնությունը և Հայաստանակենտրոնությունը:** Ազգային չափման մեջ այդ սկզբունքի էությունն է՝ հայության համախմբումն ու գործունեության կազմակերպումը նոր որակի հայկական պետության կայացման և դրա առանցքի շուրջ համահայկական ցանցապետության ձևավորման ու կայուն զարգացման գործընթացում: Միջազգային չափման մեջ այդ սկզբունքի էությունն է՝ արտաքին հարաբերությունների հաստատումը և զարգացումը Հայաստանի ու հայության ռազմավարական շահերի, Հայաստանի ինքնուրույնության ու հայկական գործոնի ազդեցության հարաձուլ մեծացման գերակայության, համայն մարդկության հոգևոր-մշակութային զարգացման գործում հայության ներդրման գնահատման, դրա ժառանգորդության ամրագրման ու քաղաքակրթական դերի վերահաստատման, ինչպես նաև այդ ներդրման մասնաբաժնի հետզհետե ավելացման մեկնակետից:

1.3.6.2. **Համահայկականությունը:** Հայաստանը պետք է դառնա համայն հայության Հայրենիքը և այլ պետություններում ապրող հայությունը Հայաստանի քաղաքացիների հետ

միասին պետք է կարողանա մասնակցել հայության և Հայաստանի ռազմավարական նպատակների առաջադրմանն ու իրագործմանը և դրանցից բխող խնդիրների լուծմանը:

1.3.6.3. Հասարակական ու ազգամիջյան համերաշխությունը և միջազգային համագործակցությունը: Հայաստանյան հանրության ներսում ու հայկական գաղթօջախներում անհատները և սոցիալական խմբերը, հայերը ու Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունները պետք է ապրեն ու գործեն համատեղ և համերաշխ գոյակցության, իսկ հայկական պետությունը, նրա հասարակությունն ու համայն հայությունը միջազգային կազմակերպությունների, տարածաշրջանի և այլ օտարերկրյա պետությունների, դրանց քաղաքացիների ու սոցիալական խմբերի հետ՝ արդյունավետ համագործակցության պայմաններում:

1.3.6.4. Ռազմավարականությունը: Հայության և նրա պետության բոլոր քայլերը պետք է բխեն ազգային ռազմավարական շահերից և միտված լինեն դրանց իրացմանը:

1.3.6.5. Արժեքահենքությունը և գիտահենքությունը: Հայության և նրա պետության կյանքը կազմակերպվում է արժեքահենք ու գիտահենք կենսակերպի, դրանց գերակայությամբ պայմանավորվող հասարակական, տնտեսական և պետական գործունեության միջոցով: Այս սկզբունքը, մասնավորապես, ենթադրում է՝ նյութականի նկատմամբ հոգևոր-մշակութայինի, տնտեսականի նկատմամբ բնապահպանականի, էքստենսիվի նկատմամբ ինտենսիվի, ռեսուրսատարի նկատմամբ գիտատարի, քանակի նկատմամբ որակի գերակայություն:

1.3.6.6. Ներդաշնակությունը: Հայության և նրա պետության կյանքը կազմակերպվում է հոգևորի ու նյութականի, բնականի ու բանականի, կենսաբանականի ու սոցիալականի, օրգանականի ու տեխնիկականի, ավանդականի ու արդիականի, անհատականի ու հանրայինի, ազգայինի ու համամարդկայինի ներդաշնակ միասնության հիման վրա:

1.3.6.7. Ստեղծագործականությունը: Հայությունը և նրա պետությունը գործում են ստեղծագործաբար՝ մշտապես ղեկավարվելով առկա գիտելիքն ու փորձը կատարելագործելու և/կամ նորը ստեղծելու տրամաբանությամբ: